ԵՐԱԺԻՇՏ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐ XII—XIII ԴԴ. ԽԱՉՔԱՐԵՐԻ ՎՐԱ

Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Հայ մատենագրության մեջ սակավ են երաժշտական գործիքների ու երաժիշտ կատարողների մասին վկայությունները։ Այդ բացը մասամբ լրացնում են հնագիտական նյութերը, ինչպես նաև մանրանկարչությունը։ Պեղումներից հայտնաբերված նյութերն արժանացել են մասնագետների ուշադրությանը[1]*։ Ինչպես հայտնի է, Սևանա լճի ափամերձ Ծովակ գյուղից հայտնաբերվել է եղջերափող, իսկ Կարմիր բլուրում՝ ծնծղաներ։ Քնարի, շնչական երաժշտական գործիքների վրա կատարող նվագածուների քանդակներով է զարդարված էրեբունիում հայտնաբերված մ. թ. ա. V դ. ռիտոն-եղջերագավաթը։ Լարային գործիքի պատկերով երաժիշտների տերակոտային արձանիկներ են գտնվել Արտաշատ քաղաքատեղիում, ջութակահարի պատկերով ապակե սրվակ՝ Դվինում, ոսկրե սրինգներ՝ Գառնիում և Դվինում։ Շեփոր է վերարտադրված Գեղարդի XIII դ. վիմափոր եկեղեցու բեմի և Մշո Առաքելոց եկեղեցու քանդակազարդ դռան վրա, Մաշտոցյան Մատենադարանի XII—XVI դդ. մանրանկարներով զարդարված ձեռագրերի էջերում։ Նվագարանների ձևը, կառուցվածքը հարազատորեն արտապատկերված են միջնադարյան մի շարք քարե քանդակներում։*

Հայ երաժշտական մշակույթի ուսումնասիրության համար հետաքրքիր է Սյունիքի Պառավաձոր հնավայրում գտնվող խաչքարը։ Պահպանվել է խաչքարի միայն մի մասը. խաչի հորիզոնական թևի ստորին մասը՝ խորաքանդակ, ծաղկազարդ, հյուսվածքաձև վերջավորություններով և ստորին թևը (նկ. 1, 2)։ Խաչքարի ձախ կողմի հատվածում պատկերված է բամբիռը (փանդիռ) ձեռքին նվագասաց գուսան։ Քանդակագործը հիմնականում պահպանել է մարդու մարմնի մասերի համաչափությունը։ Համեմատաբար լավ է մշակ-

---

[1] Б. Б. Пиотровский, Զարմիր-բլուր, 1, Ереван, 1950, стр. 54, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 72, Р. Джанполадян, Стеклянный сосуд из Двина («Краткие сообщения Института истории материальной культуры АН СССР», вып. 160, 1955, стр. 120—124), Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, стр. 75, Հ. Ջանփոլադյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ապակե սրվակ (Հայաստանի պետական պատմական թանգարան, «Աշխատություններ», № V, Երևան, 1959, էջ 149—150), Է. Խանզադյան, Հայկական հին երաժշտական գործիքներ (Հայաստանի պետական պատմական թանգարան, «Աշխատություններ», № V, էջ 63—93), А. М. Цицикян, Редкое изображение древней скрипки (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1960, № 2, էջ 79—80), նույնի, «Древние истоки армянской смычковой культуры» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 1, стр. 37—48), Б. Н. Аракелян, Клад серебряных изделий из Эребуни («Советская археология», 1971, № 1, стр. 143—157), Ф. И. Тер-Мартиросов, Терракоты из Арташата (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 4, էջ 82—91), А. Л. Оганесян, Музыка в древней Армении («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 61—76)։

ված գուսանի դեմքը, պարզ նշմարվում են աչքերը, հոնքերի աղեղները, քիթը և բերանը։ Քանդակագործը ձգտել է վերարտադրել նույնիսկ դեմքի առանձին մասերի ծավալը, սակայն մարմինը և ոտքերը ստացվել են տափակ, մասամբ սխեմատիկ։ Հիանալի է վերարտադրված շարժումը։ Բամբիռի սի-

Նկ. 1. XIII դ. խաչքար (Գառավաձոր)։

մերին հպած նվագասացի ձախ ձեռքը, լայն բացած մատներով, շեշտում է երաժշտական գործիքի լարերին դիպչելու նրա հակումը։ Աջ ձեռքի մատները բամբիռի սիմերին դրված լինելը առավել ակնառու է դարձրել այն, որ պատկերվածը երաժիշտ-կատարող է։ Հետաքրքիր է նվագածուի զգեստավորումը. գլխին ունի սրածայր գդակ, որի ականջակալները հասնում են ուսերին, պա-

ռեգոտը իջնում է ծնկներից ցած, ոտքերին՝ սրածայր մուճակներ։ Խաչքարի վրայի քանդակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու նաև բամբիռի կառուցվածքի, ձևի մասին։ Գործիքի դուշը թիականման է, բավա-

Նկ. 2. XIII դ. խաչքարի գծանկար (Գառավաձոր)։

կան երկար։ Նվագարանի առանձին մանրամասները՝ երեսի ձայն-անցքերը քանդակի վրա չեն տրված։ Գործիքի գրիֆը՝ պարանոցը կարճ է ու լայն։ Բացակայում են ձայնաշարերը (փարդաները), գլխիկի մանրամասները, լարիչ ականջները։ Սակայն դուշի և գրիֆի վրա որոշակի նշմարվում են քառաղի բամբիռի մելոդիկ լարերը։ Դուշի և գրիֆի ստորին մասից կախված է նվա-

գարանը ուսելու պարանը։ Խաչքարի աջ կողմի համանման հատվածում թվականն է՝ ԹԻՆ։ ՈՀ։ (1221 թ.) ԷՐ։ Կոթողի վերին, չպահպանված մասը շրջանակավորված է եղել զարդապատկերներով, որոնց աննշան մասն է պահպանվել՝ խիստ հողմնահարված վիճակում։ Մեր կարծիքով, այս խաչքարը որևէ հայտնի նվագասաց-գուսանի հիշատակի համար է։

Պակաս ուշագրավ չէ վերը հիշատակված կոթողից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող XII դ. մեկ այլ՝ մեջտեղից երկու կես եղած, գեղաքանդակ խաչքարը։ Կոթողի բարձրությունը (առանց պատվանդանի) 120 սմ է, լայնությունը՝ շուրջ 80 սմ, հաստությունը՝ 13 սմ։ Խաչքարի միջնամասում խաչի զարդաքանդակ պատկերն է։ Վերին թևի երկու կողմերից, դեպի խորք թեքվածքով, քանդակված են խաղողի ողկույզներ։ Խաչքարի ստորին մասը եզրափակվում է արմավենաձև զարդաքանդակի երկու ճյուղերով, որոնց վերին ծայրերն ավարտվում են իրար վրա դրված վարդյակների երկու ուռուցիկ պատկերներով։ Խաչապատկերի վերին՝ հորիզոնական և ուղղահայաց՝ կողմնային մասերը շրջանակավորված են երկթել հյուսվածքով, ուղղանկյունաձև զարդաքանդակներով։ Հյուսվածքների կենտրոնում տեղադրված են փոքր, ուռուցիկ վարդյակներ։ Խաչքարի ստորին, կենցաղային պատկերաքանդակներ ունեցող հատվածը բավական հողմնահարված է։ Խախտելով խաչքարի կերպավորման կանոնիկ սկզբունքները, քանդակագործն այստեղ պատկերել է աշխարհիկ տեսարան (նկ. 3, 4)։ Խաչքարի այն հատվածում, ուր սովորաբար տեղադրվում են բուսական, երկրաչափական զարդաքանդակներ, զետեղված է հեծյալ ռազմիկի հետաքրքրական քանդակ։ Աջ կողմում, հավանաբար, վերարտադրված է ծալապատիկ նստած կին երաժշտի պատկեր։ Բոլոր պատկերներն իրենց բնույթով հարթաքանդակային են։ Հեծյալը վերարտադրված է դիմացից, սրածայր գդակով, որի ականջակալները հասնում են մինչև կուրծքը, իսկ վերնազգեստը՝ մինչև ծնկները։ Նրա գոտուց կախված է տապար, իսկ ձեռքին կա նիզակ։ Նժույգի գավակին նշմարվում են գորգի եզրագծեր։ Ձիու առջևի հատվածը և ոտքերը մասամբ հողմնահարված են։ Երաժշտի դեմքը պատկերված է դիմացից և դիմային մասը շրջափակող գլխաշորը գոգավոր ձևով իջնում է կրծքի վրա։ Աջ ձեռքով, հավանաբար, բռնել է ջութակ հիշեցնող գործիք, իսկ ձախ ձեռքը տարել է դեպի ձախ։ Քանդակագործի կողմից զարդակաղապարը (տրաֆարետը) ոչ ճիշտ տեղադրվելու հետևանքով, աջ ու ձախ կողմերը խառնվել են։ Հեծյալի քանդակի երկու կողմերում, խաչքարի շրջանակին կից, ինչպես նաև հեծվորի երկու կողմերում տեղադրված են վարդյակներ։ Ուշագրավ է խաչքարի արձանագրությունը, որն ավանդում է, թե այն կանգնեցվել է 1194 թ. Աբլհեջի որդի Վասակի կողմից՝ իր եղբայր Հասանի հիշատակին։ Կնոջ պատկերի մոտ հիշատակված է հանգուցյալ Հասանի մոր՝ Խուշուշի անունը։ Բերում ենք արձանագրությունն ամբողջությամբ. ԹԻ։ ՈԽԴ։ [1194] ԵՍ ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ԱԲԼՀԵՋԻ ԿԱՆԳ[Ն]ԵՑԻ ԽԱՉ[Ս] Ի ՎԵՐԱՅ ՏԱ[ՊԱ]ՆԻՆ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ ՀԱՍԱՆԱՅ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՈՐԾՈՂԻՆ. ԽՈՒՇՈՒՇ ՄԱՅՐ ՀԱՍԱՆԱ։ Խաչքարի վրա զարդակաղապարի ոչ ճիշտ տեղադրված լինելը թեև կասկած չի հարուցում, սակայն քանդակի հողմնահարված լինելու հանգամանքը տեղիք է տալիս տարակուսանքի. այն հնարավորություն չի ընձեռում, առանց վերապահության, պնդելու քանդակապատկերի երաժիշտ լինելը։ Եթե հետագա ուսումնասիրությունը



Նկ. 3. XII դ. խաչքարի ստորին մաս։

Նկ. 4. XII դ. խաչքարի մաս։

հաստատի մեր ենթադրությունը, ապա կունենանք կին երաժշտի եզակի քանդակ՝ խաչքարի վրա։

Երաժշտական գործիքների պատկերումը խաչքարերի վրա հավաստում է միջնադարյան Հայաստանի բնակչության կենցաղում լարային նվագարանների տարածված լինելը։ Սազի նախատիպը հանդիսացող բամբիռի քանդակի առկայությունը 1221 թ. խաչքարի վրա, բնակչության ամենատարբեր խավերի շրջանում այն ամենատարածված երաժշտական գործիքը լինելու վկայությունն է։ Այդ քանդակները ոչ միայն ընդլայնում են միջնադարյան երաժշտական գործիքների մասին մեր իմացությունները, այլև հնարավորություն են տալիս հասու լինելու երաժշտական կենցաղի այն իրողություններին, որոնք չեն ավանդվել հայ մատենագրության մեջ և վիմական արձանագրություններում։

РЕЛЬЕФЫ МУЗЫКАНТОВ-ИСПОЛНИТЕЛЕЙ НА ХАЧКАРАХ XII—XIII вв.

Г. О. КАРАХАНЯН

Резюме

В материальной культуре средневековой Армении встречаются памятники, на которых воспроизведены рельефы музыкантов-исполнителей или музыкальных инструментов. Однако до сих пор изображение музыкантов не встречалось на хачкарах. В этой связи значительный интерес представляют два хачкара, обнаруженные в Сюнике. В Паравадзоре и в трех километрах от него найдены два хачкара XII—XIII вв., на месте щита которых имеются изображения музыкантов, играющих на струнных инструментах.